

Հումորը և այլն: Այսպես՝ ծաղրածու պարզաշենքիները ստիպված են կատակի տալով հասկացնել ժողովրդի վիճակը՝ նշմարառությունը հայտնել ծաղրածանակա՞ն խոսքերով: Այդ նույն ձևագիր պլանների մեջ է եսև տպագրա վեպի հետևյալ սեուգիր տողին էլը. «Քաջ Նազար» վեպ, մասն տողին, Հայաստանի լեռնային գյուղերից մեկում ապրում էր Նազար անունով մի մարդ իր կնոջ՝ Սասիանի հետ: Մազումով այս մարդն ու կինը, եթե իրենց հարցները, ազնիվ լին, և գյուղի իշխանավորներից: Գա միշտ էր, բայց ոչ այնքան: Նրանց հայրերն ու պապերը կիսա-հուլան, կիսատենետր լին, միշտ ձգտելով կոզոպուտի, կամ այլ միջոցով կարողություն ձեռք բերել: Բայց որովհետև...»¹⁴ (Այսանց ձևագրին ընդհատվում է):

Գրողի ձևագրերի մեջ գտնում ենք եսև զանազան երկերի համար գրված աֆորիզմներ, մտքեր, տեսարաններ, երկախոսություններ: Բերենք գրանցից մի քանիսը. «Մարդկային միտքը չի բավարարվում ձեռք բերածով, ես ձգտում է «ավելին», միշտ կմեա այդ պահանջը՝ էլ ավելի, էլ ավելի էլ ավելի և սա միշտ համբավանա», «Լսելը թեորիա է, տեսնելը՝ պրակտիկա», «Բնությունը մահը ստեղծել է կյանքը սիրել տալու համար», «Ովքեր հավատ չունեն, դժվար են մեղսում: Հեշտ է մահը, երբ քեզանից հետո պետք է ապրի մի մեծ բան», «Մանր է սիրույց տանջվելը, բայց և տանջելը մարդուն», «Հավատում ենք, ծնվել ենք, հավատում ենք ապրում ենք, բայց չենք հավատում, որ զեպի մահ գնում ենք (մտքեր)», «Ակնոցով մարդը, որ զգույշ գնում է, — երկրաշարժ է պատահելու: — Յիկուս է պատվում, կարող էև նանապարհները փակվել: — Ապա ակնոցս որ կտարվի: Օպտիկ մազազին չկա», «Ենելադարը կնոջն է տալիս իր ողբ թողակը, կինը — ես էլ ունեմ 40 ուրլի: Սուրեն — ո՞ր է: Կինը, — այ (ցույց է տալիս Ս-ի տվածը), սա իմն է, ես քեզանից լավ կապրեմ»: «Մի ժամանակ շատ անխելք էի: — Հիմա ինչպե՞ս եք: — Հիմա խելացի եմ: Հիմա ուլիկն (դիալոգներ):»

Ձևագրերի մեջ գտնում ենք Գորկուս նվիրված «Կրակ» դրամատիկական պոեմի (անավարտ) հետևյալ հատվածները. «Սիրում եմ կրակը, վեպվետում է ես... տեսնում եմ հուսով, մարդը քայլում է զեպի արևը, զեպի տիեզերքը... ամեն վեհ բանի բնությունն է՝ այլվել, արձակվել լույս գեղեցկությամբ և ապա՝ հանգչել... Զի լինի՞ կրակը... երբեք մի կարծիր, կհանգչի աշատեղ, այնտեղ կցայտի մի այլ վառ կրակ, երկրի ընդերքում անվերջ անբավ է պաշարը կրակի... Եվ ով սիրում է կրակը այնպես՝ անմահ է արդեն: Ահա թե ինչու կրակն եմ սիրում... Սիրիր գեղեցիկը, սիրիր վեհը, միշտ կլինես զու վեհ, անմահի սերը անմահ է դարձնում, ահա թե ինչով հավերժանում ենք մենք... վախ չունեմ մահից, ի՞նչ է կյանքը, կանցնի ես մի որչի անցնի միայն ժողովուրդը հավետ»¹⁵:

Վերը քննության առնվեց Դ. Դեմիրճյանի անկատար, անտիպ երկերի և մտահղացում-պլանների մի մասը: Մեծ գրողի ֆոնդում պահվում են արձակ, լավածո և դրամատիկական երկերի այլ ձևագրեր նույնպես, որոնք չեն կարող չհետաքրքրել մեր բանասիրությանը:

Ա. ԲԱՂՅԱՍԱՐՅԱՆ

«ԳՈՒԼԵՍԹԱՆԻ» ՌՈՒՍԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայ բանասիրությունը ուսումնասիրել է Ստեփանոս Նազարյանի հրապարակախոսական, լուսավորական գործունեությունը, գնահատել անցյալ դարի 50—60-ական թվականներին հայ գրական, հասարակական կյանքում կատարած նրա դերը: Այս մասին գրվել են ծավալուն մենագրություններ, բազմաթիվ հոբելյանական ու գիտական հոդվածներ, հաղորդումներ, հուշեր և այլն:

Սակայն, եղած ուսումնասիրություններում անուշադրության է մատնվել նրա արևելագիտական գործունեությունը (որին նա քիչ ժամանակ չի նվիրել) կամ, լավագույն դեպքում, այդ մասին հիշատակվել է կենսագրական ու մատենագիտական բաժիններում, անցողակիորեն, առանց քննության: Այնինչ ցայսօր էլ քչերին է հայտնի, որ Նազարյանը իր ժամանակի խոշորագույն արևելագետներից մեկն է եղել և մեծ աշխատանք է կատարել ուս առևելագիտության

¹⁴ Նույն տեղում, № 535ա, 537:

¹⁵ ԳԱԹ, Դեմիրճյանի ֆոնդ, № 701:

ազարգացման գործում, որ նա ուսական իրականության մեջ հիմնադիրն է ֆիրդուսիագիտության¹ և Սաադիի «Գուլեսթանի» ուսերեն ամբողջական առաջին թարգմանության հեղինակը²:

Կարծում ենք այս հարցերի մանրամասն ուսումնասիրությունը ևս կարևոր նշանակություն ունի Ստ. Նազարյանի ժառանգությունը ավելի ամբողջականությամբ զնահատելու համար:

Խոսենք միայն «Գուլեսթանի», նրա թարգմանության հանգամանքների, արժանիքների ու թերությունների, ինչպես նաև՝ այն ազդեցության մասին, որ թողել է Նազարյանի աշխատանքը Սաադիի երկի ուսերեն հետագա թարգմանությունների վրա:

Ստ. Նազարյանը քաջահմուտ էր արևելյան լեզուների, մասնավորապես՝ արաբերենի ու պարսկերենի մեջ: Նրա պարսկերեն իմացության մասին չափազանց հետաքրքիր վկայություն է անում րանասեր Նրվանդ Շահազիզը իր հուշերում: «...Այստեղ միայն կհիշենք, — գրում է Շահազիզը, — որ Հազարյան ճամարանում, պարսից նասրեղղին շահի ներկայությամբ, Նազարյանցի պառնկեմեն (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են, — Վ. Ն.) արտասանած ճառը հնչեց որպես մի մեղեդի: Նախընթացում էր հավատալ, որ խոսողը պարսիկ չէ, այլ հայ է»³:

Պարսից լեզվի իմացությունը հնարավորություն էր տվել Նազարյանին ուսումնասիրելու իրանական գրական գոհարները՝ Ֆիրդուսու «Շահնամեն», Խայյամի, Սաադիի, Հաֆսզի, Շամիի, Աթթարիի, Զալալեղղին Ռումիի և մյուսների ստեղծագործությունները:

Նազարյանը նպատակադրվում է ուս հասարակությանը ներկայացնել Սաադիի «Գուլեսթանը», մեկը պարսից դասական գրականության այն անմահ գործերից, որ ամենից շատ է մասսայականություն վայելել թե՛ Արևելքում, և թե՛ նվրուպայում և որը մինչ այդ գրեթե անմատչելի էր մնացել ուս ընթերցողին: Ասում ենք գրեթե, որովհետև մինչև Նազարյանի թարգմանությունը, այնուամենայնիվ, ուսական տարրեր ամսագրերում «Գուլեսթանից» առանձին փոքրիկ հատվածներ եղել են հրատարակված⁴, որոնցից միայն մեկին է տեղյակ եղել Նազարյանը⁵:

Ստ. Նազարյանը ձեռնամուխ է լինում ու ավարտում աշխատանքը Ռուսաց լեզվով, 1857 թ., մոսկվայում առաջին անգամ լույս է տեսնում Սաադիի ամբողջական «Գուլեսթանը» թարգմանչի գրած մի ընդարձակ առաջաբանի հետ մեկտեղ:

Ե՛րբ է արել Նազարյանը թարգմանչական այս աշխատանքը:

Որքան մեղ հայտնի է, ոչ ոք, նույնիսկ Նազարյանի կենսագրությամբ զբաղվողներից ոչ ոք չի հետաքրքրվել այս հարցով: Միայն Ն. Աղրալյանը Նազարյանի «Երկերի» առաջին հատորի համար գրած առաջաբանում, խոսելով հայ հրապարակախոսի կազանյան շրջանի գործունեության մասին, ավելացնում է. «Նա աշխատել է Նա աշխատել (Կազանում, — Վ. Ն.) պարսկերենից ուսերեն թարգմանեց նաև Սաադիի Գուլեսթանը, թեև լույս տեսավ 1857 թ.»⁶:

Փաստերի ուսումնասիրությունը մեղ բերեց այն համոզման, որ ճիշտ չէ Աղրալյանի հայտնած կարծիքը: Ահա թե ինչու:

ա) Նազարյանը Ֆիրդուսուն նվիրած իր աշխատության երկրորդ գրքում, որը լույս է տեսել 1851 թ. մոսկվայում, անդրադառնալով մինչև XV դարի պարսկական գրականության հարցերին, խոսում է նաև Սաադիի մասին և հիշատակում «Գուլեսթանի» զրուխները: Որոշ զրուխների վերնագրերի ուսերեն հիշատակությունը չի համընկնում իր հրատարակած «Գուլեսթանի» համապատասխան զրուխների թարգմանությանը:

¹ Абул-Касем Фердауси Тусский, творец Книги Царей, известной под названием Шах-Намэ, с присовокуплением краткого обзора истории персидской поэзии до исхода XV столетия по Р. Х. Сочинение доктора Восточной словесности Степана Назариянца, книга I, Казань, 1849, 104 стр., книга II, Москва, 1851, 94 стр.

² Розовый кустарник шейха Муслехеддин Саади Ширазского славный под названием Гулистана, перевод с персидского С. Назариянца, доктора Восточной словесности, Москва, 1857, 174 стр. Предисловие XX стр. (այսուհետև՝ «Розовый кустарник»):

³ «Էջմիածին», 1949, 1—2, էջ 72:

⁴ А. Крымский, История Персии, ее литературы и дервишеской теософии, том III, № 1—2, Москва, 1914—1917, էջ 433—436:

⁵ «Розовый кустарник», Առաջաբան, էջ VI: Այստեղ Նազարյանը շփոթել է ամսագրի անունը՝ Նրա նշած տվյալները՝ 1851 թ., հատ. 78, բաժին II, էջ 49—68 և այլն, մեր ուսումնասիրողները ցույց տվեցին, որ վերցված են «Отечественные записки» և ոչ թե «Библиотека для чтения» ամսագրից, ինչպես նշում է ինքը՝ Նազարյանը:

⁶ Ստ. Նազարյան, Երկեր, հատ. 1, Թիֆլիս, 1913, Առաջաբան, էջ 4Ա:

„Цветник роз“,

„О свойствах царей“,

„О спокойствиях и счастии довольства“,

„О пользе молчаливости“⁷

„Розовый кустарник“

„О поступках царей“,

„О достоинстве воздержания“

„О пользе молчания“⁸

Կասկածից վեր է, որ և՛ թիվ Մոսկվա գնալի թարգմանած լինելի Սաադիի գործը, նա-
ղարյանը իր «Абул-Касем Фердауси...» աշխատության մեջ կոպտագործներ երկրորդ, ավելի
ճիշտ ձևերով:

բ) Եթե նազարյանը արդեն Կազանում կատարած լինելի այդ աշխատանքը, ինչո՞ւ պիտի
„Абул-Касем Фердауси...“ ուսումնասիրության նույն այդ երկրորդ դրքի ծանոթա-
գրություններից մեկում նշել միայն, թե „Перевод Гулистана на русский язык нашего
ученого друга, профессора восточных языков при Императорском С-Петербургском
университете Мирзы Казембека, к сожалению, остается до сей поры в рукописи“⁹,
Բնական է, որ այստեղ նազարյանը կհիշատակեր նաև իր թարգմանության մասին:

դ) Եվ վերջապես, ուշագրություն պետք է դարձնել նազարյանի առաջարկում հայտ-
նած հետևյալ տեղեկության վրա: „Текст, служащий основанием нашего перевода, из-
данный в Табризе с полными сочинениями Саади, при Мухаммед-Шахе-Казии в 1264 год
Гиджрета, или в 1849 нашего летосчисления“¹⁰.

Հայտնի է, որ նազարյանը Կազանից դուրս է եկել հենց 1849 թ.: Ուրեմն, այդ նույն թվա-
կանի հրատարակությունը այն ժամանակվա հաղորդակցության միջոցների պայմաններում
դժվար թե թավրիղից հասներ Կազան՝ նազարյանի ձեռքը, էլ չենք իրոքում թարգմանվելու
մասին:

Ստ. նազարյանը «Գուլեսթան» թարգմանել է Կազանից դուրս գալուց հետո միայն՝ Մոսկ-
վայում:

Փորձենք պարզել, թե մասնավորապես ո՞ր թվականին:

Հենց սկզբից առնենք, որ թարգմանական այս աշխատանքը նազարյանը արել է «Հանդես
և որ հայախոսության» առաջին դիրքը ավարտելուց հետո, որովհետև այս աշխատության առա-
ջին մասում, որը լի է իրենց բովանդակությամբ Սաադիի ստեղծագործության գաղափարներին
մոտ հունական, հռոմեական, արևելյան ու եվրոպական մի շարք ժողովուրդների կյանքից ու
դրականությունից վերցված խրատա-դաստիարակչական բնույթի բազմաթիվ առակներով, մանր
պատմվածքներով, եղելություններով, գրույցներով, ոչ մի հատված չկա վերցված «Գուլեսթանից»:
Չէ որ նազարյանը իր գրքի համար ընտրել է նաև պարսիկ, համեմատաբար շատ քիչ հայտնի,
Արզել-Ղադեր Գիլանեցու ճանապարհագրությունից հատվածներ¹¹: Ուրեմն, ինչպես կարող էր
ճոռանալ Սաադիիս, երբ նրա «Գուլեսթանից» որոշ կտորներ վերցնելը ավելի տրամաբանական ու
նպատակահարմար կլիներ: Եվ նազարյանը կաներ այդ բանը, եթե, չասենք թարգմանած, գոնե՝
ճանրամասնորեն ուսումնասիրած լինելի «Գուլեսթան»: Պարզ է, որ Սաադիի դիրքը թարգմանվել
է «Հանդես և որ հայախոսության» առաջին մասը ավարտելուց հետո միայն:

Հիմա տեսնենք, թե ե՞րբ է ավարտել այս աշխատանքը:

Նորերումս, այսինքն 1853 թվականին, Դորպատյան լրագրի մեջ լինում է այս պատմու-
թյունը¹²: — գրում է նազարյանը «Հանդես և որ հայախոսության» առաջին գրքի սկզբի էջերից
մեկում: Եզրակացվում է, որ նազարյանը վերը նշված թվականին նոր է սկսած եղել դրել դիր-
քը: Եթե ընդունենք, որ այդ ամբողջ սովոր հաստորը (500-ից ավելի էջեր) կազմելու, հսկայա-
ծավալ նյութը մշակելու ու գրելու համար անհրաժեշտ է առնվազն 1,5—2 տարի, ուրեմն այս
աշխատությունը հեղինակը վերջացրած պետք է լինի 1854 թ. վերջերին կամ 1855-ի սկզբներին:
Այնպես որ, 1855 թ. հունիսին գրաքննիչն արդեն կարդացել էր դիրքը ու թույլատրել տպա-
գրության¹³:

⁷ Абул-Касем Фердауси, книга II, Москва, 1851, էջ 76:

⁸ „Розовый кустарник“, էջ 12:

⁹ Абул-Касем Фердауси, книга II, էջ 80:

¹⁰ „Розовый кустарник“, Առաջաբան, էջ XIX:

¹¹ Ստ. նազարյանց, Հանդես և որ հայախոսության, առաջին մասն, Մոսկվա, 1857, էջ 99—111:

¹² Նույն տեղում, էջ 80:

¹³ Նույն տեղում, տե՛ս շապիկի երկրորդ էջը:

Հենց նույն 1855 թ. սկզբներից էլ ըստ երևույթին նազարյանը սկսել է աշխատել «Գուլեսթանի» քաղվածություններ վրա ու վերջացրել հաջորդ տարվա սկզբներին և ոչ ուշ: Այդ է ապացուցում գրաքննիչների «Марта 6 дня 1856 года»¹⁴ նշումը:

Որո՞նք են Ստ. Նազարյանի թարգմանության արժանիքներն ու թերությունները:

Նախ և առաջ այս աշխատանքը Սաադիի «Գուլեսթանի» առաջին լրիվ թարգմանությունն է ռուսերեն և մեկ քառորդ դար անընդհատ եղել է միակը և ավելի քան հարյուր տարի՝ ամենաարողջականը, որով ռուս մտավորականությունը կարողացել է հաղորդակից լինել XIII դարի պարսից մեծ բանաստեղծի, գեղագետի ու փիլիսոփայի մտքերին¹⁵:

Թարգմանության համար գրած առաջաբանում «Գուլեսթանի» գեղարվեստական առանձնահատկությունների, գաղափարների համամարդկային նշանակության մասին խոսելուց հետո, Նազարյանը ընթերցողին ծանոթացնում է Սաադիի զրթի եվրոպական հրատարակությունների պատմությանը, գնահատում լավագույն թարգմանությունները: Այնուհետև, այս առաջաբանում է, որ առաջին անգամ ռուսերեն շարադրվում է Սաադիի կենսագրությունը, պարսից ու եվրոպական լեզուներով եղած համապատասխան գրականության հարուստ տվյալների օգտագործմամբ: Իրանական գրականության ընդհանուր ֆոնի վրա Նազարյանը գնահատում է Սաադիի տեղն ու դերը, վերլուծում «Գուլեսթանի» գեղարվեստական արժանիքները, ժանրային առանձնահատկությունները, մեկնաբանում ու պատճառաբանում զրքում պատկերված սիրային այն դրսևորումները, որ հատուկ են միայն Արևելքին և խորթ՝ սիրո մասին ունեցած մեր պատկերացումներին:

Երկար ժամանակ նախասովետական շրջանի ռուս արևելագետների ուսումնասիրություններում հանիրավի թերագնահատվել է Նազարյանի աշխատանքը, իրեն ոչ լրիվ թարգմանություն:

Այս կարծիքի առաջին հայտնողը եղել է արևելագետ Ի. Խոլմոգորովը, որը Նազարյանից ուղիղ 25 տարի անց հանդես եկավ «Գուլեսթանի» մի նոր թարգմանությամբ: Իր թարգմանության ծանոթագրությունների բաժնում նա գրում է.

«Сколько известно, творения шейха Саади не появлялись в переводе на русский язык вполне», այնուհետև տողատակին ավելացնում է. «Существуют впрочем два не совсем полные перевода г. Назарианца и г. Ломброса (в Одессе)»¹⁶.

Խոլմոգորովը պարզապես նպատակ է ունեցել հասարակությանը ավելի ամբողջական ու դրանով իսկ՝ ավելի արժեքավոր ներկայացնել իր թարգմանությունը: Այլ կարծիք լինել չի կարող: Հակառակ դեպքում ոչ մի կերպ հնարավոր չէ բացատրել Խոլմոգորովի այս վերաբերմունքը: Բնագրի հետ երկու թարգմանությունների համեմատությունն էլ մեղ բերում է այն համոզման, որ Նազարյանի աշխատանքը ավելի ամբողջական է, քան՝ Խոլմոգորովինը:

Այսպես, Սաադիի «Գուլեսթանի» առաջին զլուխը կաղաված է 41 հեքայաթներից¹⁷, Նազարյանը թարգմանել է բոլորը¹⁸, Խոլմոգորովը՝ 40-ը¹⁹, Բնագրի 40-րդ հեքայաթը, որ սկսվում է یکی از ملوک کنیزکی چنین آوردند տողով, Խոլմոգորովը չի թարգմանել:

Երկրորդ զլխում ամփոփված է 50 հեքայաթ: Թարգմանելիս Խոլմոգորովը բաց է թողել բնագրի 15, 16, 17, 18 և 31-րդ պատմվածքները: Այդ պատճառով էլ այստեղ երկրորդ զլխի սյուսմվածքների թիվը հասնում է ընդամենը 15-ի²⁰: 31-րդ պատմվածքը չի թարգմանել նաև Նազարյանը: Բայց, հակառակ Խոլմոգորովի, նախորդ պատմվածքի թարգմանությունը ավարտելուց հետո տողատակին ծանոթագրել է. «Здесь пропущена одна повесть, которую

¹⁴ «Розовый кустарник», տե՛ս շապիկի երկրորդ էջը:

¹⁵ Հաջորդ աչքի ընկնող թարգմանությունը պատկանում է արևելագետ Ի. Խոլմոգորովին: Տե՛ս «Гюлистан, с персидского подлинника перевел И. Холмогоров», издание К. Т. Солдатенкова, Москва, 1882, 353 стр. (այնուհետև՝ Гюлистан, Խոլմոգորովի թարգմ.):

¹⁶ «Гюлистан» (Խոլմոգորովի թարգմ.), էջ 237: Լոմբրոսի թարգմանությունը լույս է տեսել Օդեսայում, 1862 թ.: Առանձին զրքով լույս տեսած բոլոր թարգմանությունների մեջ այն աշխատանքը ամենից ավելի անկատար է:

¹⁷ էջ 120. گلستان سعدی مسکو ۱۹۵۹

¹⁸ «Розовый кустарник», էջ 47:

¹⁹ «Гюлистан» (Խոլմոգորովի թարգմ.), էջ 86:

²⁰ Նույն տեղում, էջ 140:

из внимания к нежным нервам образованных наших читателей, оставили мы непере-
веденною²¹.

Այս է բնագրի միակ պատմվածքը, որ չի թարգմանել նազարյանը, այն էլ, ինչպես տե-
սանք, որոշակի նկատառումով: Իսկ մնացած բոլոր 6 գլուխները թարգմանել է լրիվ:

Զորորոգ գլխից Խոլմոգորովի մոտ պակաս է բնագրի 6-րդ՝ سبحان واتر را در صحاح بی نظیر تفاعله اند:

Մնացած գլուխները լրիվ են նաև Խոլմոգորովի թարգմանության մեջ:

Այսպիսով, ամբողջ «Գոլեսթանից» նազարյանը չի թարգմանել միայն մի պատմվածք, իսկ
Խոլմոգորովը բաց է թողել 7-ը:

Նետագայում նորից «Գոլեսթան» ուսերեն է թարգմանել արևելագետ Եվ. Բերտելսը և
հրատարակել է Բեռլինում²²: Այս հրատարակությունը, չնայած ունի անժխտելի առավելություն-
ներ, բայց իր ոչ լրիվությամբ գերազանցում է Խոլմոգորովի թարգմանությանը:

Եթե նկատի ունենանք, որ «Գոլեսթանի» ամենալրիվ ուսերեն թարգմանությունը վերջնա-
կանապես իրականացվել է 1959 թ.²³, ուրեմն ավելի քան մեկ դար միակ ամենալրիվ «Գոլես-
թանը» նազարյանին է եղել:

Գիտնականի անբարեխղճության հետևանք պետք է համարել արևելագետ Ռ. Ալիևի կար-
ծիրը, որ առանց հարցի էությունը նախապես ստուգելու պնդում է. «Из этих же трех
переводов (նկատի ունի Ստ. Նազարյանի, Կ. Հոմբրոսի և Ի. Խոլմոգորովի թարգմանու-
թյունները.—Վ. Ն.) наилучшим и наиболее полным является перевод И. Холмогоро-
ва...»²⁴.

Անժխտելի է Խոլմոգորովի թարգմանության մի առանձնահատկությունը, որ ունի առավե-
լություն նազարյանի աշխատանքի համեմատությամբ. այն ամենից առաջ աչքի է ընկնում լեզ-
վական պարզությամբ:

Բայց միայն լեզվի պարզությամբ է միթե, որ որոշվում է թարգմանության որակը: Որակ-
յալ պետք է համարել այն թարգմանությունը, որը ավելի հարազատ է բնագրին, որի մեջ չեն
աղավաղվել թարգմանվող երկի ոգին ու բովանդակությունը, և ավելի ճիշտ են հաղորդվել
տվյալ հեղինակի մտքերը, պահպանվել բնաշխարհի շունչը:

Խոլմոգորովը միշտ չէ, որ հարազատ է մնացել բնագրին: Դրա հետևանքը եղել է այն, որ
Էրբեմն տուժել է «Գոլեսթանի» բովանդակությունը:

Բերենք մի քանի օրինակ:

دیدیم بسی که آب سر چشمه خرد
چون بیشتر آمد شیر و بار ببرد

...«ատ եմ տեսել՝ փոքր ակունքով ջուրը սաստիկ վարարել,

Հորդանալով բեռնած-բարձած ուղտ է քշել ու տարել»²⁵:

(Թարգմ. Ա. Մելիք-Վարդանյանի)

Բնագրի այս հատվածը սխալ է հասկացել Խոլմոգորովը և թարգմանել է. «мы видим,
что много выходит воды из малого источника, который, когда увеличится, уносит и
верблюда и его ношу»²⁶.

Սաադին խոսում է փոքր ակունքի ջրի վարարելու մասին և ասում, որ այդպիսի բան շատ
ենք տեսել: «ما را دیدیم که آب سر چشمه خرد چون بیشتر آمد شیر و بار ببرد»

նույն հատվածը ճիշտ է թարգմանել նազարյանը.

много видели мы вод, которые...²⁷

دوست دیدم آن را وقتی توان دید که معزول باشد...

²¹ «Розовый кустарник», էջ 66.

²² Шейх Муслих-эд-дин Саади Ширазский. Гулистан, Избранные рассказы, перевод Е. Бертельса, Берлин, 1922.

²³ Саади, Гулистан, критический текст, перевод, предисловие и примечания Р. М. Алиева, Москва, 1959, 227 стр.

²⁴ նույն տեղում, Առաջաբան, էջ 52:

²⁵ Սաադի, Գոլեսթան, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 36:

²⁶ «Гюлистан» (Խոլմոգորովի թարգմ.), էջ 31:

²⁷ «Розовый кустарник», էջ 18:

Դիվանում աշխատող բարեկամին այն ժամանակ է հնարավոր տեսնել, երբ պաշտոնաթող չինի՝ ասելով, Սաադին ընդգծում է մի խոր միտք, Դասակարգային հասարակության մեջ իշխող, առհասարակ, ձեռք բերելով պաշտոն, փառք ու ճանաչում, կտրվում է իր երբեմնի շրջապատից, անպետքանում նրա համար, բյուրոկրատանում, Քանի դեռ ծառայության մեջ է, պաշտոնյան խուսափում է նախկին բարեկամներին հանդիպելուց, որպեսզի հանկարծ ստված չլինի ընդառաջ գնալ նրանց կարիքներին: Չէ որ այդ կարող է անհաճո վիճակ ստեղծել նրա համար:

Սրան Սաադին, որպես մարդ, որպես մտածող, դժմ է բայց միաժամանակ նա գտնում է, որ այս հանգամանքը իրրեւ երևույթ անխուսափելի է, մարդու, կյանքի համար հատկանշական, Իրա համար էլ Սաադին այստեղ ոչ-որի չի միղաղորդում:

Նաղարյանը ճիշտ է հասկացել Սաադիի այս միաբեր. „приятеля, служащего в диване, можно видеть в доволь, когда он отстранен от должности“²⁸.

Այնինչ խոլմոզորովը բոլորովին աղավաղել է բնագրի իմաստը. „...друга-чиновника тогда приятно видеть, когда он удален будет от должности“²⁹. Այստեղ ավելացել է նաև վրեժխնդրության, չարակամության բովանդակություն, մի բան, որ չկա բնագրում:

یادشاهی باغلام عجمی در کشتی نشست

Բավականին պարզ ու հասկանալի շարադրել է Սաադին: խոլմոզորովը թարգմանել է.

Какой-то государь плыл вместе с мальчиком персиянином на корабле. (ծառա, սարուկ) զարձել է՝ „мальчик“³⁰, թե ինչ նկատառումով, մնում է անհասկանալի: Նաղարյանը շատ հարազատ է մնացել բնագրին:

Один из гасударей с невольником своим—Персиянином сидел на корабле³¹.

سر چشمه شاید گرفتن به بیل

Այս առղը խոլմոզորովը թարգմանել է.

Источник при самом начале можно завалить камнем...³²

Այստեղ بیل բառը, որ նշանակում է «բահ» անտեղի վերածվել է „камень“-ի:

Այնինչ Նաղարյանը թարգմանել է ճիշտ. „Начало источника можно остановить лопаткою“³³: ملک որ նշանակում է «թաղավոր», խոլմոզորովը գրեթե միշտ էլ թարգմանել է князь³⁴, իսկ Նաղարյանը՝ государь, царь, султан, властитель և այլն³⁵, որոնք ավելի մոտ են թաղավոր հասկացությանը:

Այս բնույթի շեղումներ խոլմոզորովի թարգմանության մեջ շատ կարելի է գտնել, բայց բավարարվենք միայն նշածներով:

Ուրեմն, ինչպես տեսանք, որոշ հարցերում Նաղարյանը ավելի ճիշտ է ըմբռնել թարգմանվող աշխատանքի գաղափարն ու բովանդակությունը, քան նրա հաջորդը:

Ստ. Նաղարյանի աշխատանքի երկրորդ կարևոր արժանիքն այն է, որ նա հիմնականում հարադատ է մնացել ընագրին, ամեն կերպ աշխատել է ճշտորեն տեղ հասցնել բանաստեղծի խոհերն ու հայացքները, պահպանել «Գուլեսթանում» արտահայտված արևելյան շունչը, ինչ խոսք որ երբեմն, առանց գրքի իմաստը աղավաղելու, արել է նաև որոշ շեղումներ:

Мы хотели дать Саади беседовать в русском кругу чистым русским словом, но в колорите азиатском,— գրել է թարգմանիչը,— мы переводили не всегда буквально, но стремились к тому, чтобы в переводе по возможности произвести те же впечатления, которые производит подлинник³⁶.

²⁸ Նույն տեղում, էջ 63:

²⁹ „Гюлистан“ (խոլմոզորովի թարգմ.), էջ 117:

³⁰ Նույն տեղում, էջ 37:

³¹ „Розовый кустарник“, էջ 21:

³² „Гюлистан“ (խոլմոզորովի թարգմ.), էջ 28:

³³ „Розовый кустарник“, էջ 16:

³⁴ „Гюлистан“ (խոլմոզորովի թարգմ.) էջ 39, 41, 43, 69, 228 և այլն:

³⁵ „Розовый кустарник“, էջ 9, 21, 24, 37, 117 և այլն:

³⁶ Նույն տեղում, Առաջարան, էջ XIX:

Քարգմանությունը հրատարակված է «Գուլեսթանում» հիշատակված գիցարանական ու պատմական նշանավոր հերոսների, երևույթների, զրական երկերի ու հեղինակների մասին արված հանգամանալից, միանգամայն անհրաժեշտ, բարձր մակարդակի ժանոթագրություններով, որը մեծացնում է նազարյանի աշխատանքի գիտական նշանակությունը: Այս էլ Քարգմանությանը երրորդ կարևոր արժանիքը:

Բայց նազարյանի այս գործը անթերի չէ: Աշխատանքի հիմնական թերությունը այն է, որ բնագրի չափածո հատվածները Քարգմանված են արձակ և որոնք, որևէ նշանով չեն անհատված արձակ տեքստից: Այնպես որ առանց բնագրի հետ համեմատելու հնարավոր չէ իմանալ ո՞ր մասն է արձակի և ո՞րը չափածոյի Քարգմանությունը: Եվ երկրորդը՝ նազարյանի լեզուն բարդ է փոքր-ինչ, հնացած ու վերամբարձ:

Նազարյանի Քարգմանության մեջ միայն այս երկու թերությունն է գտնում նաև արևելագետ Ս. Կրիմսկին, միաժամանակ ընդունելով՝ «Иногда он (Н. Назарян) и полнее Холмогоровского»³⁸.

Նշված թերություններով հանգերձ, նազարյանի Քարգմանությունը կարևոր նշանակություն է ունեցել Սաադիի երկի ուսուերեն հետագա Քարգմանությունների գործում:

Նազարյանի աշխատանքը օգնել է հետագա Քարգմանիչներին թեկուզ և այնքանով, որ հնարավորություն է տվել քննելու բնագրի զժվար ըմբռնելի տեղերը, բաղդատելու իր և նազարյանի կարծիքները. մեկնաբանությունները այս կամ այն հարցում, ընտրություն կատարելու, օգտվելու առավել ճիշտ ձևերից: Իսկ սա փոքր նշանակություն չի ունեցել նոր Քարգմանությունների որակի համար:

Ավելին կարող ենք ասել: Հետագա Քարգմանիչներից մասնավորապես Ի. Խոյմոզորովը ուղղակի ապավինել է նազարյանի տեսակետներին ու ղեկավարվել նրանցով: Նա նույնիսկ ընդօրինակել է նազարյանի երբեմն բնագրից կատարած շեղումները անգամ: Ահա գրանցից մի փանիսը:

مردان دلاور از کمین بدر جستند و دست یگان یگان بر کتف بستند³⁹

Նազարյանը Քարգմանել է՝

В эту пору храбрецы выскочили из засады и разбойникам по одиночке привязали руки на спину⁴⁰.

Նազարյանը ավելացրել է «в эту пору» արտահայտությունը, որը չկա բնագրում:

Նույն նախադասությունը Խոյմոզորովը Քարգմանել է.

В эту пору храбрецы выскочили из засады и перевязали по одиночке руки всем разбойникам за плеча⁴¹.

Դժվար չէ նկատել, որ Խոյմոզորովը հետևել է իր նախորդին:

«گفتند من، از کتف بستند» բառակապակցությունը Քարգմանելիս նազարյանը հատուկ անվանված փրա ավելացրել է էպիտետ, մի բան, որ չի եղել բնագրում և ստացվել է՝

Венценосца Хормуза спросили...⁴²

Խոյմոզորովին զուր է եղել նազարյանի գրած էպիտետը:

Венценосцу Гормузу говорили...⁴³

Տեղ-տեղ նազարյանի Քարգմանությունը ոճավորելու նպատակով այնպիսի ձևեր ու արտահայտություններ է ավելացրել, որոնց կարելի է հանդիպել Սաադիի «Գուլեսթանում», սակայն բնագրի տվյալ մասում չկան և չեն եղել:

Խոյմոզորովը նույնպես չափածոն արձակ է Քարգմանել, ռայց անհատել է արձակի Քարգմանությունից:

³⁸ А. К р ы м с к и й, История Персии, ее литературы..., том III, № 1—2, Москва, 1914—1917, էջ 454:

³⁹ گلستان سعدی ٤٢

⁴⁰ „Розовый кустарник“, էջ 17:

⁴¹ „Гюлистан“ (Խոյմոզորովի Քարգմ.), էջ 29:

⁴² گلستان سعدی ٥٥

⁴³ „Розовый кустарник“, էջ 22:

⁴⁴ „Гюлистан“ (Խոյմոզորովի Քարգմ.), էջ 38:

«Գուլեսթանի» առաջին գլխի 4-րդ պատմվածքում պատկերված վազիրը, առարկելով թագավորին, ասում է.

آنچه خداوند دام منته فرمود عین حقیقت است⁴⁵

Ստ. Նաղարյանը ռճավորել է ավելացնելով մեր ընդգծած մասը՝

Все, что Султан—да процветает долго государство его—заметил, светлая истина⁴⁶.

Պոլմոգորովը նույնպես դիմել է ռճավորման նույն մեթոդին:

...Все, что указывает государь—да продлится его царствование!—есть сушая правда...⁴⁷

دردی گدائی را گفت⁴⁸

Այստեղ 50-րդ ստորոգյալը արտահայտված է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով՝ ասաց: Բայց Նաղարյանը ժամանակը փոխել է՝

Вор говорил нищему⁴⁹.

Պետք է լիներ „Вор сказал нищему“: Պոլմոգորովը, որ մինչև այս տեքստի բոլոր ստորոգյալները թարգմանել էր անցյալ կատարյալով, այստեղ արդեն հետևելով Նաղարյանին, թարգմանել է սխալ՝

Вор говорил нищему⁵⁰.

Իներենք ևս մի խոսուեն օրինակ և դրանով սահմանափակենք:

Սաադիի 51-րդ Գոլեսթանի Նաղարյանը թարգմանել է.

...погасить пожар, но оставить горящий пепел...⁵².

52-րդ Գոլեսթանի Նաղարյանը թարգմանել է «կայծ», և ճիշտ կլիներ, եթե թարգմանվեր՝ искра, ինչպես թարգմանվել է մեր օրերում Ալիի կողմից: Այնինչ Պոլմոգորովի թարգմանությունը մեծ Նաղարյանի թարգմանածը խմբագրվել է միայն:

... тушить огонь и оставлять горячий пепел...⁵³.

Այս, ինչպես նաև վերևում թվարկված օրինակները անժխտելիորեն ապացուցում են, որ Նաղարյանը բավականին օգնել է ինքնուրույն թարգմանության զործում:

Սաադիի «Գուլեսթանի» մյուս թարգմանիչները՝ Ն. Բերտոլուսի մեր դարի 20-ական թթ., իսկ ավելի ուշ՝ Ռ. Ալիևը նույնպես ձեռքի տակ ունեցել են Նաղարյանի թարգմանությունը և օգտվել նրանից:

Նաղարյանի թարգմանությունը «Գուլեսթանի» ռուսերեն առաջին ամբողջական թարգմանությունն է, որ տասնամյակներ շարունակ ծառայել է ռուս ընթերցող հասարակությանը, և հռչակալից դեր կատարել հետագա ավելի կատարելագործված թարգմանությունների համար: Այս տեսանկյունից էլ պետք է դնահատել ու արժեքավորել հայ արևելագետի աշխատանքը:

Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԼԵՍԻՆԳԻ ՀԱՅ ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լեսինգի ստեղծագործության նկատմամբ մեղանում հետաքրքրություն է առաջացել XIX դարի կեսերից սկսած, երբ առաջնահարգ պահանջ էր դարձել թարգմանաբար հայ ընթերցողին ներկայացնել «նվիրապետ» լավագույն նվաճումները՝ գրականության, փիլիսոփայության, դրամատուրգիայի մարզերում:

1851 թ. «Թանասերի» № 11-ում մենք հանդիպում ենք «Յաղագս սկզբնավորության թատերական արուեստին լալլ և ալլ ազգա» վերնագրով խմբագրական հոդվածին, որտեղ փորձ է

⁴⁵ گلستان سعدی ۴۴ էջ

⁴⁶ „Розовый кустарник“, էջ 171

⁴⁷ „Гюлистан“ (Պոլմոգորովի թարգմ.), էջ 30:

⁴⁸ گلستان سعدی ۴۲ էջ

⁴⁹ „Розовый кустарник“, էջ 90:

⁵⁰ „Гюлистан“ (Պոլմոգորովի թարգմ.), էջ 109:

⁵¹ گلستان سعدی ۴۳ էջ

⁵² „Розовый кустарник“, էջ 171

⁵³ „Гюлистан“ (Պոլմոգորովի թարգմ.), էջ 29: